

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ

ՄԵԼԻԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարեկանը 5 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է լ է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).
Յայտարարութիւն ընդունւում է ամեն լիզուով.
Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է լ է Ք օ Ն № 253.

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Ինչպէս էին ետպահանջները դանդաղում.—
Ներքին Տեղապահութիւնը. Վ. Գ. Պլեյզնի սպա-
նութիւնը. Նաժար Եւրոպայ. Ներքին լուրերը.
—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը.
Տեղեկութիւններ Պարսկաստանի մասին. Ար-
տաքին լուրերը.— Ներքին Գործեր. — ՅԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայ և թիւրք
մտաւորականներու յարաբերութիւնները:

ԻՆՉՈՒԻ ԷԻՆ ԵԱՊՈՆԱՅԻՆԵՐԸ ԴԱՆԴԱԳՆԱԾ

Այդ հարցն է տալիս ինքն իրան
«Berliner Tageblatt» լրագրի ռազմագիտա-
կան աշխատակիցը և աշխատում է իր
բացատրութիւնը տալ (տես ՈՅՈՒՆ). Ար-
շարի վերջին մի ամսվայ ընթացքում ետ-
պահանջները զօրք կանգ էր առել լեւանդո-
նի մօտ և այդ մի ամսվայ ընթաց-
քում հազիւ առաջ էր գնացել մի 50
վերստ տարածութիւն:

Եթէ ենթադրենք նոյն իսկ, որ զօրքը
պէտք է իր շարժումների համար ճանա-
պարհներ շինէր, այնու ամենայնիւ նա
իւրաքանչիւր օր մի քանի վերստ առաջ
գնացած կը լինէր և երկու շաբաթվայ
ընթացքում կարող կը լինէր վճարական
ճակատամարտ տալ: Ուրեմն մարաշայի
Օյեւանայի դանդաղ շարժումների պատ-
ճառը ճանապարհների չին:

Պատճառը ռազմագիտական կարող էր
լինել:

Անկասկած ետպահանջն շատը լաւ
գիտէր, որ նրա համար սպասելը նպաս-
տաւոր էր կարող լինել: Եւ անա ինչու:
Մինչև այժմ դեռ տեղ չեն հասել ուստի
խոշոր զօրաքանդեր: Ետպահանջները ունեն
թուական գերազանցութիւն և ուրեմն
նպատակաւոր պայման յարձակողական գոր-
ծողութիւններ անելու համար:

Պատճառը պէտք է ընդունել այն, որ
գեո. և ս. պատերազմի դաշտ չէին
հասել Ետպահանջի ուղարկված լրացու-
ցիչ գնդերը: Դա Նոգոլիի զօրքն էր, որ
պէտք է բանէր Կոնստանդնուպոլիսի և Օլուի զօրքի
բանակների մէջ տեղի: Իսկ ինչ վերաբե-
րում է երբեք զօրաբանակին, նա զբաղ-
ված էր Պոլս-Արաբիի պաշարման գոր-
ծով: Այս վերջին զօրքը գործում է Նոգոլի
հրամանատարութեան տակ:

Ետպահանջում մնացել է մշտական
զօրքի մի զօրաբաժին ևս, ուրեմն 20,000
հոգի: Նա գետնիցված է հիւսիսային Եսոս
կղզում և հաւանական է, որ նա այնտե-

ղից չը շարժվի, որովհետև Ետպահանջում
բարձր են համարում պահել պատերազ-
մական ոյժերից գոնէ մի լուրջ հատւած:
Հէնց որ ետպահանջն զօրաբանակների
կազմութիւնը վերջացաւ, յարձակողական
գործողութիւնները վերականգնել: Վերջին
պաշտօնական հեռագիրները ցոյց են
տալիս, որ ետպահանջն զօրաբանակները
մտել են ներգործական գործողութիւն-
ների շրջանի մէջ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Վ. Գ. ՊԼԵՅՆԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Մայրաքաղաքի լրագրիցները հաղորդում են
ներքին գործերի մինիստրի սպանութեան
հետեւալ մանրամասնութիւնները: «Յուլիս
15-ի» առաւօտեան 9 ժամ 50 րոպէին,
ասում է Ք. Բ. լրագրի, այնպիսի չար-
գործի ձեռքով սպանվեց ներքին գործերի
մինիստր ստատ-սեկրետար Վ. Գ. Պլեյզն:
Մինիստրը կառքով գնում էր Բալանի եր-
կաթուղու կայարանը Կրասնո-Սելո մեկնե-
լու համար: Երբ նրա կառքը հաւասարվեց
«Վարչական հիւրանոցի» մուտքին, որ գտն-
վում է Իզմայիլեան փողոցի և Օբլոզնի ջրանց-
քի անկիւնում, հիւրանոցի դռնից դուրս թուա-
մի երկուստար, 23—24 տարեկան, երկա-
թուղային գործակալի գլխարկով, նրա ձեռ-
քում կար մի ուռւ, որ գտնւում էր նստած
առետուր անող կինն ընդունել էր կառքի
գլխի տեղ: Արագ վազելով դէպի կառքը, նա
ուռւով նստեց կառքի տակ: Որոտաց խա-
ցուցիչ պայթիւնը, որից հիւրանոցի 5 յարկանի
տան բոլոր պատուհանների ապակիները փշուր-
փշուր եղան թէ փողոցի կողմում և թէ Օբ-
լոզնի ջրանցքի ափի կողմում: Վարչական
կայարանի գերաբնակների հակայական պա-
տուհանքի ապակիներն էլ փշուրվեցին: Պրօպեկ-
տի վրա գտնված ոստիկանութիւնը և ժողո-
վուրդը թափվեցին պայթիւնի տեղը և սալա-
յատակի վրա մինիստրին գտան արդէն մեռած,
շախախտված գանգով ու ծոտով, ծակտած
կրծքով, պատահական շրջագետնով: Նա կի-
սապառկած վրձակի մէջ էր, թափախված իր
արեան մէջ, սալայատակի վրա, շրջապատված
կառքի մանր կտորանքով: Կառքի մարդը
մասը ոչնչացել էր, մնացել էր միայն առաջին
մասը, որ վերաւորված ձեռքը փայցքին տարան
կայարանի ուղղութիւնով: Ծանր վերաւորված
կարապետը, ընկնելով իր նստելու տեղից,
թնջկովեց սանձերի մէջ և մի քանի քայլ բարձ-
րացանքից—մինչև որ ձեռքին կանգնեցրին: Կա-

ռապանին տարան Վարչականի կայարանի մօ-
տի պարտէզը, ուր նա շուտով մեռաւ: Մար-
շապանին իսկոյն ձեռքաւորվեց անցորդներից
մէկի ցուցումով և խոտովանվեց իր ոտքով,
բայց որովհետև վերաւորված էր, դրա համար
ուղարկեցին նրան Ալեքսանդրեան հիւանդա-
նոցը՝ բանտային համար: Այնտեղ ընտելեան
ժամանակ երկաց, որ վերաւորված են նրա
երեսը, ոտները և ուռւները կտորները պատել
են նրա փորի ներքին մասերը և աղբնեցրել:
Ոճրագործը ոչինչ չէր ասում, միայն հեծկտում
էր: Կէսօրից յետոյ ժամը 3-ին սկսեցին ուռւ-
ների կտորները հանել: Պայթիւնը միայն մի-
նիստրին ու նրա կառապանին չը սպանեց,
սաստիկ վնասվեց կառքի ետեւից պատահաբար
գնացող Սեմեոնովի գնդի գլխարկական կա-
պիտան Յվեցինսկին: Ռուսերի կտորները նրա
գանգին երկու բարձր վէրք են հասցրել: Վերա-
ւորել մինչև Ալեքսանդրեան հիւանդանոց ճանա-
պարհի կէսը ոտով եկաւ, յետոյ՝ կառքով հիւան-
դանոց գալով, դեռ էլի պատում էր դէպքի
մասին, բայց շուտով սկսեց կորցնել գիտա-
կութիւնը. ստիպված եղան երկու տեղ նրա
գանգը տեղափոխելու հիւանդանոց: Նրա դե-
րութիւնը ծանր է: Եւստով նոյն հիւանդանոցը
երբին մի գրեզացու իր կնոջ և երեխայի հետ,
Պետերբուրգ ժամանելով, նրանք կայարանից
ոտով էին գնում և պայթիւնի րօպէին մի-
նիստրի կառքի մօտ էին: Գրեզացին վայր
է ընկել և մի քիչ բերթվածք ստացել. քրա
կնոջ սրունքը շախախտվել է, իսկ երեխայի
երեսն է մի քիչ բերթված: Հանգուցեալ մի-
նիստրի դիակը «Արագ օգնութեան» կառքով
իւր բնակարանը տարվեց: Վարչականի կա-
յարանում ժամը 10 1/2-ին ժողովրդի նախաձեռ-
նութեամբ հոգեհանգիստ կատարվեց: Մինիստրի
ընտանիքը միայն նախընթաց օրը մեկնել էր ար-
տասանման: «Վարչականի հիւրանոցի» ծա-
ռաներն ասում են, որ ոճրագործն առաւօտեան
եկաւ հիւրանոց, պահանջեց թէյ և օղի: Յանկարծ
նա վեր թուա տեղից և վազեց դէպի դուռը:
Հաղիւ մի քանի անխնայ անցած լավեց 11-ը
ոտուր: Մարդասպանի գրգռանում գտնվել է 6
հարուածեան մի տարածանալ: Ոճրագործն ար-
տաքինում 25—27 տարեկան է երևում, շիկա-
ղէմ է և բարձրահասակ: Լուրջ վէրքեր է
ստացել ոստիկանութեան մի գործակալ: Յվե-
ցինսկու մասին արդէն ասացինք: Պատահա-
բար այդ տեղով անցնող պետական կոմսոբի
աստիճանաւոր Իվ. Իվ. Լաւրենտիւիլը աննշան
վէրք ստացաւ գլխից: Կան և ուրիշ քիչ կամ
շատ նշանաւոր վէրքեր ստացողներ: Ընդհա-
նուր թիւն է 18 հոգի վերաւոր:

որքան անձայն ու անփառունակ, նոյնքան ե-
ռանդով ու փութաշնորհամբ յամառում են
թիւրք ուղղել մէջ ծիցնել գիտակցական,
լուսաւոր կեանքի բողբոջները:

Յիշելու համար բազմաթիւ փաստերից մինը
ասենք, որ «Մարաշի» Միհրան էֆենդի Նա-
զախանի հրատարակած յայտնի թիւրքերի գը-
խաւոր աշխատակիցը մի հայ էր, Տիւրան էֆ.
Քէլեկեան: Քէլեկեանը այնքան էլ արհամար-
հելի մի ոյժ չէր. բազմակողմանի զարգաց-
ման, զբաղման լայն ու հաստատ կրթութեան
տէր, նա մեծ փայլով և տաղանդով աշխա-
տակցում էր ոչ միայն յիշեալ թիւրք լրա-
գրին, այլ և հայ մի քանի յիշեալ թիւրք և հանդէ-
սի. օրինակ Յովհաննէս Եսայիականի և Ար-
փիւրեանի «Հայերէնիքին», Տիւրան ծիվէլե-
կեանի «Երկրի Շարքին» *) հայատառ բայց
Թրքախօս Օրաթթիւնի, Իրիզուր Զոհրապի և
Տիգրան Ռաֆիկեանի խմբագրութեամբ լոյս
ստանող «Մասիսին»: Առանց նպատակի չէ,
որ արի այս թուրք. նա յստակ կերպով ցոյց
է տալիս, որ Քէլեկեանը մի կարևոր լրագրա-
կան գործիչ էր, որի աշխատակցութիւնը
փնտռում էր նոյն իսկ հայ մամուլը:

Հուլիսից առաջ չը գիտենք լինի փաս-
տերի վրա յենված՝ պնդում է, որ թիւր-
*) Այս լրագրից Թրքախօս հայերի համար էր հրա-
տարակվում և հրատարակվում է այժմ. ունեւ նաև
հայերէն յօդուածներ ըստին:

ՆԱՄԱԿ ԾՈՒՇՈՒՑ

Յուլիսի 16-ին
Ամսիս 14-ին, Ն. Սանդախտեանի դահլի-
ճում, հայ դերասանական դրամատիք ընկե-
րութիւնը տուեց «Մանկական տօն», բաղկա-
ցած մի ֆարս-վոզովից, «Նոր-Դիօգէն»
կենդանի պատկերներից և պարերից:
«Տօնը» սկսվեց ժամը 4-ին և վերջացաւ
11-ին:

«Նոր-Դիօգէնը» մանկական կեանքից վերց-
րած մի վոզովի է, որտեղ ցոյց է տրվում
գլխաւորապէս աշակերտների չարածընդու-
թիւնը և ուսուցչի անկանխելի գրութիւնը
այդպիսի դէպքերում: Թէ վոզովիւր և թէ
պատկերները կարելի է յարմար ու աշող հա-
մարել:

Պէտք է գոհ լինել դերասանական ընկերու-
թիւնից, որ հարկ է համարել քիչ թէ շատ
աշխոյժացնել մեր թմրած երեխաներին, զուրկ
բոլորովին հոգեկան որ և զուարճութիւնից:
«Տօնը» ընդհանրապէս սահուն անցաւ և նկա-
տելի էր կարգ ու կանոն և դա շնորհիւ պ.
Արեւիկեանի, որը իր վրա էր վերցրել կարգա-
դրելի պաշտօնը: Այդ մի և նոյն օրը՝ որտեղից
որտեղ մեր ժողովարանի կառավարիչները
հարկաւոր են համարել նոյնպէս մանկական
երեկոյթ սարքել, բաղկացած յաւկապիս պա-
րետից: Ժողովարանի այդ «Երեկոյթը» մասամբ
խանդարեց դերասանների «Տօնին» և դահլիճը
ամբողջովին լիւրջ էր փորձելիներով:

Ի՞նչն էր ստիպել ժողովարանի կառավա-
րիչներին հէնց այդ մի և նոյն օրը երեկոյթ
սարքել,—չենք հասկանում բոլորովին և չենք
էլ ուզում հասկանալ...

Երեկայեցէք, որ Շուշին անգամ յարձա-
կողական գիրք է բռնել... խօշորայի դէմ:
Սկսել են մի առանձին եռանդով փողոցների
դարաւոր կեղտոտութիւնները մաքրել: Եւ եթէ
դժբաղդութիւն ունենաւ առաւօտեան ժամը
8-ից մինչև գիշերվա ժամը 11-ը փողոցներով
անցնել, անպայման փողոց թանձր բուրաները
առատութեամբ ու հպարտութեամբ կը նստեն
ձեռ հագուստի ու դէմքի վրա...

Փողոցները ջրելը մեղ մօտ «աթաղան-բա-
րդան» հարկաւոր չէ համարվում, որովհետև
այդ մենաշնորհը հին-հին դարերից է վեր
ընտելեան է վերապահված...

Անշուշտ այս յանկարծակի շարժումը բա-
ղաբային ինքնավարութեան գործն է: Բայց
ինչպէս է նա մոռացել և մեր բակերը ու մա-
նաւանդ, «քեալվասանները», որոնք իրանց կեղ-
տոտութեամբ պակաս չեն փայլում: Մեղ մօտ

բանայից, եթէ օսմանեան գրականութեան
օժանդակել են, այդ նպատակը շատ դատա-
պարտելի է եղել, քանի որ նա ամփոփվել է
«Փրանսիական խոհանոցի պոռնիկազբական և
թեթիւ կամ կեղտոտ արտադրութիւնների»
շրջանակում: Յանկալի էր, որ Հուսէյնզադէն
փաստերով խօսէր: Եթէ թէ թիւրքահայերը՝
Փրանսիական բարձր ու գաղափարական դրա-
կանութեան թարգմանիչներ և ծաւալիչներ
չեն եղել: Բայց մեղքը նրանց չէ: Յանցանքը
նախ և գլխաւորապէս թիւրք ցենզուրայինն է,
յետոյ գուցէ թիւրք լեզուին և հասարակու-
թեանը երկի միայն Հուսէյնզադէն և Բագուր
ուսու լրագրիչը չը գիտեն, թէ ի՞նչ բան է
թիւրք ցենզուրան: Ամբողջ աշխարհը գիտէ,
որ այդ հաստատութիւնը թշնամի է ոչ միայն
մաքրելի, գաղափարների, այլ նոյն իսկ բառե-
րի, և այն էլ հասարակ, անվնաս, ողորմելի
բառերի: Դեռ ևս վերջին ժամանակներս կա-
տարվեց հայ լեզուի վրա թիւրք գրաբնու-
թեան գաւէշտային գործողութիւններից մինը:
Բոլոր հայ թիւրքերին արգելվեց տալ «Ազ-
գային լուրեր» խօսքի առաջին բառը, որը
տարիներով է վեր գործ էր անվում: Երեւա-
կայեցէք, յանկարծ այդ բառը դարձաւ sub-
versif... անշուշտ թիւրք գրաբնիչները ու-
ղղել մէջ:

Արդ, այսպիսի սարսափելի պայմաններում
ինչպէս թիւրքահայը կարող էր օսմանեան

նոյն իսկ սովորութիւնն է դարձել այդպէս աղբը բախի մէջ տեղը ու տարածել գորշահոտութիւնը ամբողջ թաղում: (Երեւակայում եւ մասնաւոր եկողներն է «զղալիներն» դրութիւնը !): Այդ բանը նկատելի է աւելի աշանդ, երբ ծառերի տերեւները թափվում են և հարկ է լինում բակը, պարտեզը մաքրել: Ճիշտ է, սա միայն շուկայում գործնական լինելն է ապացուցանում, բայց անհրաժեշտ է դրա առաջնաւելի, թէ չէ մի փառաւոր օր նա... արտաբերող կեղտոտութիւններն էլ կայրէ բակում...

Մտաւայ սարերում, դէպի Չանախի և Սիւնախ տանող ճանապարհներին, նկատել են աւազակային խմբեր: Գաղաք եկող գիւղացիները ամեն օր յափշտակութիւնների դէպքեր են պատմում: Անցնողին, ինչպէս ասում են, թեփում են: Աւազակութիւնները գլխաւորապէս նկատելի են «Չանախ» կողմէ տեղում, որ շատ մօտ է գտնվում Դաշալի գիւղին:

Երէկ, ամսիս 15-ին, մի անտառապահ (օճե-ՅՅԱՄԻՆԵ) հայ, Ալեքսան անունով, գաղով գործով Շուշի և հետը ունենալով պետական փողեր գանձարանին յանձնելու համար, ենթարկվում է «Չանախ» աւազակների յարձակման ու սպանման: Աւազակները, բաղկացած 5—6 թուրքերից, տանում են փողը, հրացանը և դաշոյնը, թողնելով խեղճի դիակը ճանապարհին: Անցորդները նկատում են այդ ու յայտնում ուր հարկն է: Մի և նոյն օրը գաւառապետի օգնականը մի խումբ ստորադիւններով ուղևորվում են սպանութեան տեղը:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայրաքաղաքի լրագրիները հաղորդում են, որ ֆինանսների և ներքին գործերի մինիստրութիւնները միասին մշակում են սօսն օրերի սովորական ցուցակը: Այն բոլոր սօսն և կիւրակի օրերը, որոնք մտնելու են այդ ցուցակի մէջ, խնդրի բաց անել և առևտուր անել չէ կարելի, իսկ դրանից դուրս եղած օրերը վաճառատները փակելը պարտադիր չէ:

Կովկասի պարսկական գլխաւոր հիւպատոս նշանակված է Բաքուի պարսկական հիւպատոս Միրզա-Իսմայիլ-խանը, որը յուլիսի 18-ից արդէն ստանձնել է այդ պաշտօնը:

Մեզ հաղորդում են, որ Շրջիկ կաթնարանը ներկայումս գործում է Ալեքսանդրօպոլի գաւառում: Նա եղել է արդէն Աղբուղի, Լարաբոս Լալթալի և Պարնիզի գիւղերում, այժմ անցել է Աւերբեգ գիւղը, որտեղ գործող վերջնական ցուցակը յետոյ կը տեղափոխվի Խանախի գիւղը և կը գործէ նրա շրջակայքում, իսկ յետոյ կանցնի դէպի Արագածի շրջանի գիւղերը: Կիրակի, յուլիսի 18-ին, Պարնի գիւղում Ա. Բալասանյան կարգացմի դասախօսութիւն կաթնատնտեսութեան մասին: Դասախօսութեան ներկայ էին մօտ 250 գիւղացիներ թէ Պարնիգիւղից և թէ շրջակայ գիւղերից: Դասախօսութեան ժամանակ ինստրուկտօր Մ. Սողոմոնեանց գործնականապէս սերտաւ մեքենայի միջոցով զատեց կա-

լիզուով փոխարքիւ Զօլայի, Միրբօյի, Անատոլ Ֆրանսի գործերը: Եթէ այդ բանը կարելի լինէր, հայերն նախ իրանց համար կը քարգմանէին Փրանսիայի տաղանդաւոր վիպասանների արտադրութիւնները: Բայց, ինչպէս հայերին, նոյնպէս թուրքերին խըստիւ արգելված է մօտենալ «գիտութեան ծառին»: Նրանց թոյլատրված է միայն մնանել անբովանդակ, դատարկ գրականութեամբ: Բայց թէ պօրնօգրաֆիական գրականութեամբ, այդ չը գիտեն, այդ հաստատում է ինքը՝ Նուսէյր զադէն: Գուցէ մարդը փորձով է իմանում: Ես վստահաբար կարող եմ ասել սակայն, որ հայերը թարգմանել են, ոչ թէ պոնդակաբան գործեր, այլ թոյն—դաշտական վէպեր, Ժիւ Մուրի, Յօրտիւնէ դը Բուաբօնէի, Էմիլ Ինչըրօրի նման հեղինակների աշխատութիւնները, որոնք հազիւ թէ կարելի լինի պօրնօգրաֆիա անուանել: Դրանք գեղարուեստական, գաղափարային, փիլիսոփայական թեւեղից զուրկ, սաստիկ հետաքրքրաշարժ բովանդակ են, ուր անխուսափելի կերպով չար պատժվում է և բարին վարձատրվում: Ահա թէ ինչ են տուել, կամ աւելի ճիշդ, կարողացել են տալ թուրքահայերը օսմանեան գրականութեան: Այդ մի և նոյն բաները տալիս են նոյն իսկ այսօր Կ. Պօլսի բոլոր հայ թերթերը՝ ընթերցող գրաւելու և զբաւածները ամբողջ իրանց կապելու գիտաւորութեամբ:

Թեց սերը: Դասախօսութիւններ կարգացվեցին նաև Նանվալի գիւղում և շրջակայ ամառանոցներում: Հստ երեկոյթին կատարելագործված կաթնատնտեսութիւնը իր զարգացման համար հող կը գտնէ այն շրջանում: Մեծ հետաքրքրութիւն են ցոյց տալիս դէպի նոր գործը Աւերբեգ և Նանվալի գիւղերը:

Գերմանական ճանապարհորդների մի խումբ, բաղկացած բնան հոգուց, ներկայումս ճանապարհորդութիւն է կատարում Անդրկովկասում: Նրանց մէջ կան և մի քանի կանայք: Ճանապարհորդները Բաթումից եկան Ռիֆլիս և յուլիսի 18-ին ուղևորվեցին դէպի Երևան և Էջմիածին: Ճանապարհորդներին ուղեկցում է Ռիֆլիսի ուսուցիչ Հան, որ յայտնի է իր կովկասեան ուսումնասիրութիւններով:

«Вост. Вѣст.» լրագիրը հաղորդում է, որ պրիմաուրեան կողմիցների կանայք, ստանիցաներում մնացած ծերունիների ղեկավարութեամբ եռանդուն կերպով պարապում են զինուորական արհեստով և հրացանաձգութիւնով: Նրանք ուզում են պատրաստ գտնվել ամեն մի պարագայի: Ասում են, որ այդ գործում արդէն բաւական մեծ առաջդիմութիւն են ցոյց տուել:

Հանգուցեալ Չեխովի ընտանիքը դիմել է Վ. Մ. Սօբօլեւսկուին, Վ. Ա. Գօլցովին, «Журн. для Всѣхъ» ամսագրի խմբագիր Ս. Մ. Միրօլիբովին և գեղարուեստական թատրոնի դիրեկտօր Վ. Ի. Նեմոլովին: Դրանցիւնքին և խնդրել, որ յանձն առնեն Չեխովի անունով մուզիկալ սարքերու աշխատանքները: Այս ամառվայ ընթացքում, ինչպէս հաղորդում են լրագիրները, Մօսկվայի մուզիկաներից մէկը կը յատկացնէ մի քանի սենեակ Չեխովի անունով բաժանմունք հիմնելու համար:

Օրենսդրութիւն Տաշքէնդ երկաթուղի շինելու ժամանակ գտնվել են քարածուխի առաջին տարածութեան շերտեր: «Н. В.» լրագիրն այժմ հաղորդում է, որ Պետերբուրգից Տաշքէնդ են ուղևորվել լեռնային ինժեներ Վ. Ն. Վեբերը և Մ. Մ. Բրօնիկովը քարածուխի այդ շերտերը քննելու համար: Այդ շերտերը գտնվում են Տաշքէնդի, Չեմքէնդի և Աուլէստինի գաւառներում:

Պարսկաստանի Սաբզվար քաղաքից մեզ հղում են. «Անցեալ տարի փետրվար 20-ին, մի քանի անձանց ձեռնարկներով հիմնվել է այստեղ գրադարան-ընթերցարան, «Արքունի» անունով նուիրված: Ներկայ տարում, ընդհանուր ժողովի մէջ, գրադարանի վարչութեան ներկայացրած հաշիւներից երեւաց, թէ վարչութիւնը ինչպիսի անձնագործութեամբ և անդուլ ջանքերով աշխատել է գրադարանը բարձրաձև և բարեկարգ վիճակի մէջ դնելու համար, և հասարակութիւնը ի վարձատրութիւն վարչութեան միասնայ գործունէութեան, վերջնորոգ վարչութիւնը նոյն կազմով:»

Մեզ շատ հետու կը տանէր քննել, թէ թուրք լեզուն հրքան յարմար գործիք է բարձր, իմաստասիրական գրականութեան արտայայտման: Եւ թէ արդեօք կարելի է օրինակ, թուրք լեզուով թարգմանել Էմիլ Բուրժէի Disciple—փիլիսոփային աշակերտը—Պօլ Ադանի, Ռօնի եղբայրների, Զօլայի, Միրբօյի, Ֆրանսի և ուրիշ իմաստասիրական ու գիտական ահագին բառամթերքով ծանրաբեռնված հեղինակների գործերը: Եւ յետոյ նոյնպէս հետաքրքիր էր վճռել, թէ թուրք հասարակութիւնը հրքան պատրաստ է հասկանալու և մարտնչելու մտաւոր որոշ գարգացման մասնիկի այդ արտադրութիւնները:

Բայց մենք չենք մտնի այդ հարցերի քննութեան մէջ: Մեզ համար փաստ է, որ թուրքահայերը օսմանցի ընթերցողներին տուել են հասարակ, միամիտ, հետաքրքրաշարժ վէպերի թարգմանութիւններ և դրանով մատուցել են դարձեալ խոշոր ծառայութիւն, որովհետեւ խորհրդ և դատարան բոլորովին անվարժ թուրք հասարակութիւնը կապել են տղապարսկան խօսքի հրաշքների հետ, որովհետեւ թուրք պարզեաների մէջ տարածել են ընթերցումը պահանջը:

Ես պիտի վերջացնեմ, մատնանիշ անելով և մի շատ հետաքրքիր բնորոշ փաստ, որը պարզվում է մեր աչքի առաջ, մեր ըթի տակ: Ամեն մարդ կարող է ստուգել: Հուսէյն զադէն, «Вак. Ибн.»-ն ինչպէս հեռուներն են գնում,

ՇՈՒՇՈՒՑ մեզ հղում են. «Յուլիսի 9-ին, Մ. Նանվալիքեանի դահլիճում հայ գերաւասանական գրամատիկ ընկերութիւնը, ղեկավարութեամբ Յ. Արէշեանի, ներկայացրեց «Ոճ-բազործի ընտանիքը» Ձալօմիտի 5 գործ. դրաման: Դահլիճը կիսով չափ դատարկ էր: Ներկայ եղողները սակայն բուն ծախանարութեամբ վարձատրեցին պ. պ. Արէշեանի և Ձալօմիտի (Արբիգօ Պալմիէրի, բօղիկ) խաղը:»

ՍԱՄԱՐԿԱՆԻՑ մեզ հղում են. «Ամսիս 10-ին այստեղի քաղաքային կուլուրում պ. Բոյաշեան տուեց մի կօնցերտ: Ներկայ էին բացառապէս մեր գաղութի հայ անդամները:

ԱՍՆԱԲԱՆԻՑ մեզ հղում են. «Յուլիսի 4-ին հասարակական ժողովարանի ամառային բեմի վրա Ասխաբադի հայ սերողները տուին յօգուտ հայ կանանց Բարեգործական ընկերութեան մի ներկայացում, բաղկացած հետեւեալ պիէսաներից՝ «Օրհասական դերու», «Միլիճի հարսանիք», «Երկու քաղցածներ» և «Ունլաքար»: Ներկայացումը անցաւ բաւական ուրախ, հասարակութիւնը հեռացաւ լաւ տրամադրութեան տակ:»

ՄԱՆԳԼԻՍԻՑ մեզ հղում են. «Մանգլիսի հայաց եկեղեցում կիրակի օրերը երգում է մի խումբ, որը կազմված է ամառանոց եկած երկու սեռի ուսանող երիտասարդներից. երգում է բաւականին ներդաշնակ ու սիրով է վերաբերվում դէպի իր ստանձնած գործը: Անցեալ կիրակի, Վարդապետի տօնին, ամառանոց եկած հասարակութեան աչքի ընկնող բազմութիւն կար համախմբված եկեղեցում, որը մեծ բաւականութեամբ լրանց խմբի երգեցողութիւնը ու գոհ սրբտով հեռացաւ եկեղեցուց: Խուճը արժանի է շնորհակալութեան: Վարդապետի տօնին Մանգլիսի անդուր եկեղեցում, բացի լաւ երգեցողութիւնից, աչքի էր ընկնում նաև ամառանոց եկած բոլոր քաղաքացի քահանաների (թուով մօտ ութ հոգի) բացակայութիւնը. բացի տեղական քահանայից (պատարագից) ուրիշ ոչ մի քահանայ իր պարտաւորութիւնը չէր համարել այդ նշանաւոր տօնին այցելել եկեղեցին ու մի բան խօսել տօնի առիթով. քարոզ խօսել, որը առաջնակարգ տօներին միշտ անհրաժեշտ է:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՇԻՔԻ

Կիւի Դաւիթաօի մօտ: Տօկիօից հեռագրում են, որ ուսանող ոյժերը Դաւիթաօի կուի ժամանակ բաղկացած էին հինգ ղեկիղիւններից: Երազմական դադուշանեան բանակը գրաւեց ուսանող դիրքը, որ տիրապետում էր արեւելեան ճանապարհին դէպի Պայէն, և այդ ժամանակ յետ մղվեցին երկու կամ երեք ուսանող բառաւոր: Ռուսները կարող են յետ պահել երազմանքների առաջնակարգութիւնը Պայէնի և Անշանի մէջ: Այստեղ կարծում են, որ երազմական դադուշանեան բա-

թող վերցնեն Ռիֆլիսում հրատարակվող «Շարքի-Ռուսը»: Մէհմէդ աղայի լրագրերը, փառք Ալլահին, հրատարակվում է ոչ թէ թուրքերալում, այլ Կովկասում, Ռուսաստանում: Արդ, Կովկասի թուրք թերթը, որ իր ամուսնի ստանում է ուսու մամուլից, հարկ է համարում պահել և մի հայ աշխատակից, պ. Զուլխաճեանը: Թուրքահայեր աշխատակցում էին, աշխատակցում են և այժմ Կ. Պօլսի թուրք մամուլին. թուրքահայեր գործում էին, չը գիտեմ զուգէ գործում են և այժմ Եւրօպայում երիտասարդ-թուրքերի կողմից լոյս տեսնող ֆրանսերէն թէ թուրքերէն օրգանների մէջ: Բայց հիվ կարող էր ենթադրել, որ թուրքահայերի վիճակված է աշակցել թուրք խմբագրին՝ նոյն իսկ Կովկասում: Սա արդէն շատ յատկանշական է: Հուսէյն զադէն և «Вак. Ибн.»-ն կարող են այս երեկոյթից հանել տրամաբանական եղբայրացութիւններ: «Շարքի-Ռուսի» մէջ տեղի ունեցածը մանրանկարն է Կ. Պօլսի մամուլի և գրականութեան մէջ կատարվածին: Նկատի ունեցէ՛ք և այն հանգամանքը, որ «Շարքի-Ռուսը»-ը մի ահագին, բարձրաձև հիմնարկութիւն չէ, որի համար հեշտ լինէր պահել երկրորդական աշակցները: Շահթախթիսիկի թերթը այս տարի մտաւ իր հրատարակութեան երկրորդ տարին մէջ և շատ պարզ է, որ եթէ հայ աշխատակիցը մի անհրաժեշտութիւն չը ներկայացնէր թուրք լրագրին հա-

նակը շարժվել է միաժամանակ Դաւիթաօի մօտ եղած կուի հետ դէպի Տօկուշիւն: (Տ. Ա.) —Նոյն կուի մասին Տօկիօից հեռագրում են Լօնդօն, որ գեներալ Օկուն շաքաթ օր ձեռնարկեց արշաւանքի Դաւիթաօի վրա: Ռուսները ամբացրած դիրքեր ունէին Դաւիթաօից դէպի հարաւ բարձրութիւնների վրա, որոնք ձգվում են այդտեղից դէպի արեւելք և արեւմուտք երկաթուղու գծից: Կիրակի առաւօտեան, Ռուսները հետգնեալ տարածեցին բոլոր իրանց ոյժերը, որ գեներալ Օկուն հաղվում է հինգ ղեկիղիւն 100 թնգաւորների: Ռուսաց արտիլէրիական կրակը արգելում էր երազմական առաջնակարգութիւնը, ուստի և գեներալ Օկուն վճեց սպասել մուլթը կոխելուն և գիշերային յարձակում գործել: Ռուսական երկու ղեկիղիւններ կանգնած էին Սալիս տանող ճանապարհի վրա: Ժամը 10-ին, երազմական ամբողջ աշխարհ յանդիմանեց Ռուսների վրա: Հին Ռուսական դիրքը դէպի արեւելք և արեւմուտք Տայտիլիլից՝ առնչեց առանց գիտարութեան, իսկ կէս գիշերին յարձակում գործվեց ուսանող երկրորդ դիրքի վրա: Լուսաբացին երազմանքների գրաւեցին բարձրութիւնները Շէնշիլիլիլից դէպի արեւելք և հալածեցին Ռուսներին, որոնք հեռացան դէպի Դաւիթաօ: (Ք. Ա.)

Գեներալ Դաւիթաօի կարծիք: Մի քանի ժամանակ արանից առաջ, ինչպէս կը յիշեն մեր ընթերցողները, գեներալ Դաւիթաօի մի կարծիք յայտնեց պատերազմի մասին, որը առիթ տուեց ոմանց կարծելու, թէ նա ժողովրդի արանքում կամեցել է կրիսիկայի ենթարկել Ռուսաց պատերազմական գործողութիւնները: Այժմ գեներալ Դաւիթաօի մի յայտնում է, որ նա ամենին չէ կամեցել այդպիսի կրիսիկայով զբաղվել, այլ ի նկատի է ունեցել միայն երազմանքներին: Պատերազմի առաջին շրջանը, ասաց նա, որքան էլ նա մօտ է մեղսելից, արդէն դարձել է պատմութեան սեփականութիւն և, իբրեւ այդպիսի սեփականութիւն, ենթակա է ընդհատութեան, առանց գաղտնաբար սրա կամ նրա վրա ցուցմունքներ անելու, կամ առանց վախենալու լաւ բան ասելու թշնամու մասին: Անհրաժեշտ է այն, որ պատերազմի յիշեալ շրջանը մտածված էր և իրազորովից հիշանալի կերպով և ամենին մեր կողմից ոչ մի մեղք չը կար, որովհետեւ, հաւանօրէն, մենք չէինք կարող այդ ժամանակ ներգործականապէս արգելք հանդիսանալ նրան, եթէ այդ չարեցները: Անհրաժեշտ է և այն, որ երազմական գեներալները կարողանում են այնքան վճռականութիւն ունենալ, որ կանգ չեն առնում ոչ մի գոհի առաջ, երբ, նրանց կարծիքով, նպատակը արժէ այդ գոհերին. նրանք կանգ չեն առնում և ճակատից յարձակում գործելու առաջ, մի բան, որին ամենին հաւանութիւն չեն տալիս կրակապաշտները: Նրանք գիտեն նոյնպէս, որ պահեստի գործերը գոյութիւն ունեն վերջին հարուածի համար և ոչ նախաջումը պատապարելու համար: Այստեղ ևս սպասում եմ, որ մի անկիւնից դուրս կը պրծնէ մի երիտասարդ, հաճելի զէմքով և նենգօրէն կը գոչէ «իսկ մենք, ձեռ կարծիքով, այդ չը գիտէինք»:

մար, գիտար թէ Մէհմէդ աղան համաձայնէր ծանրաբեռնել իր բերդին, թէկուզ երկրորդական կարևորութիւն ունեցող մի աշակցիցով: Եւ, իսկապէս, հայ աշխատակիցը «Շարքի-Ռուսը»-ում կատարում է մի վերին աստիճանի օգտակար գործ: Նա ոչ միայն գրում է թուրք ընթերցողներին համար ուսանելի յօդուածներ, շօշափում է լեզուական, գրական հարցեր, խորհուրդներ է տալիս «Շարքի-Ռուսի» թղթակցներին թէ ինչպէս պէտք է հետաքրքրվի ձեռ տալ իրանց նամակներին—այլ և «Մշակից» անում է մեծաքանակ թարգմանութիւններ: Նա թարգմանում է ոչ միայն Պարսկաստանից ստացված բոլոր թղթակցութիւնները, այլ և արտասահմանեան կարևոր թղթակցութիւնները, գաւառներից ուղարկված հետաքրքիր նամակները: Մի խօսքով ինչ որ «Մշակից» ունի թարգ, հետաքրքիր և ուսանելի: Այսպէս, երբ մի օր և է Զուլխաճեան՝ այսքան մեծ ծառայութիւն է մատուցանում Ռուսաստանի մահաւանդակներին, նրանց մամուլին և գրականութեան, որքան ահագին պէտք է լինի այն բազմաթիւ ու աւելի ընդունակ Զուլխաճեաններին դրը օսմանեան մամուլի և գրականութեան մէջ:

Տիգրան Զաւէն

Մանգլիս.

որի մատակարարողի մէջ՝ Այդ պատճառով ակա-
նախաճար վրաստող արեց շողեհնաւին: Ճանապարհ-
որդները և ծառայողները—6 անգլիացի, 1
ռուս և 70 չինացիներ ընկած են: Վերջիննե-
րից վիրատուրված են 12 հոգի: Հիւանդանոց
ուղարկվածներից մի քանի մարդ մեռան:

ՄՕԼԻԴԵ: Գերմանական կայսրը մեկնեց Բէր-
լին:

ՆՈՐԻՍՏԻԱՆԵՒԱ: Մասնաւոր հեռագրի հա-
մաձայն, Տրոպէի կապիտանը գտաւ մի շիշ
Անգլիէի բեհուային արշաւախմբի նամակով:
Շիշը գտնվեց մի փոքրիկ կղզու օտո՛ճպիցբէր-
էնից դէպի հիւսիս: Նրա մէջ պարունակված
նամակը գրված է 1898 թվին, նամակի բովան-
գակութեան մանրամասնութիւններին կարելի
է պատահի միայն մէկ ամից յետոյ:

Կ. ՕԼԻՄ: Բ. Դուռը անկեղծ ջանքեր է
գործ դնում ջրանցքների հարցի բարձրացնելու
արգելելու համար և գլխից Ռուսաստանին
միջնորդելով խուսափել ապագայում այն ա-
մենից, ինչ որ կարող է բողոքներ և հարցա-
պարտութիւն առաջացնել ջրանցքների վերա-
հանրապետական ստորագրող պետութիւն-
ների կողմից:

ՌԻԶԼՈՒՄԵՆ: Երէկվայ գիշերային բււլլետե-
նում, Ձիֆուից եկած հեռագրի մէջ, փոխանակ
«այնտեղ օրական գալիս են 22,000 զինւորներ»
պէտք է կարգով «այնտեղ շարաթական գալիս
են 22,000 զինւորներ»:

20 յուլիսի

ՏՕԿԻՐ: (Բէյութէ): Կառավարութիւնը վճռեց
բաց անել Ինկոուն օտար նաւերի համար:
Թշուալտրվում է ազատ նաւարկութիւն, միայն
մէկ սահմանափակութիւնով, որ վերաբերում
է ռուսաց համար բերվելի մաքսանհրական
իրերի բացարձակ արգելմանը:

ԳՏԵՏԻՐՈՒԹՅՈՒՆ: «Прав. Вѣст.»-ում տպված
է Խերսոնի փոքր նաւագնացութեան դպրոցի
հեռաւոր ծովագնացութեան դպրոցի վերած-
վելու և Ռիգայում հեռաւոր նաւագնացութեան
մի նոր դպրոց հիմնելու մասին:—Ներքին գոր-
ծերի միջնորդի փոխարէն մինիստրի օգնա-
կանը նորից թելադարեց «Новости» լրագրի
հատուկ վաճառումը:—Կառավարչական հաղոր-
դագրութիւն. «Ռուս-եապոնական պատերազմի
չէնց սկզբից սկսած Կայսերական կառավա-
րութիւնը միջնոցներ էր ձեռք առնում, որպէս
որ խանգարէ եւպոնացի տարվող մարշանէն-
ական իրերին, որ ուղարկվում էին եապո-
նական բանակին ու նաւատորմին չէզոք ազ-
գանքի նաւերով: 1904 թվի փետրվարի 14-ի
Թարձրագոյն հաստատված կանոններով, որոն-
նով Ռուսաստանը մտադիր է ղեկավարվել
եւպոնացիայի դէմ վարած պատերազմի ժամա-
նակ, յայտարարվեց մեր կողմից պատերազ-
մական կոտորածանդ ճանաչված իրերի ցու-
ցակը, նոյնպէս և յայտարարված է, որ ծո-
վային-զինւորական իշխանութիւններին հրա-
մարված է անշղի կերպով գործադրել այն
որոշումները, որոնք վերածված են ծովա-
նաւատուրմ 1895 թվի մարտի 27-ին, և
երբաւարված նաւերի ու բեռների կանգնեց-
նելու, քննելու, ձերբակալելու, տանելու և վե-
նադարձնելու կարգերի ժամի եղած հրահան-
ներին, որ հաստատված է 1900 թվի սեպտեմ-
բերի 29-ի ծովապետական խորհրդից: Կառա-
ւոր նաւատորմի «Պետերբուրգ» և «Սմոլենսկ»
ոդեհնաւերը յատուկ յանձնարարութիւն ստա-
նան, որի ժամանակամիջոցն արդէն լրացաւ,
ետեւելով իրանց յանձնված պաշտօնին, դե-
տարվում էին վերելում յիշված որոշումնե-
րով և Կարմիր ծովով անցնելիս՝ կանգնեց-
նում և խուզարկում էին իրանց հանդիպած
որոշ կառկածիւր նաւերը: Այդպիսի պայ-
մաններում «Պետերբուրգի» նաւապետը կանգ-
եցրեց՝ ի միջի այլոց՝ և անդիսական
«Մալակա» շոգենաւը, որի նաւապետը
ստաւորվեց ներկայացնել նաւային փաս-
տթղթերը բեռի մասին, որի պատ-
առով շոգենաւը ձերբակալվեց և պէտք
ուղարկվէր Ալէքսանդր III Կայսրի նաւա-
նապետը գործը պարզելու համար, սակայն,
եւ բրիտանական կառավարութեան պաշտո-
նական յայտարարութեան պատճառով՝ որ
«Մալակա» շոգենաւով տարվում էր անգլիա-
նան պետական բեռներ, Կայսերական կա-
ւարկութիւնը, միջ բրիտանական կառավա-
րութեան հետ համաձայնվելով, կարգադրեց
որդիք ըննել ձերբակալված նաւը՝ նրա ճանա-
րարչին եղող օտարակա նաւահանգիստներից
կլում և անգլիական հիւպատոսի ներկայու-
եամբ: Քննութիւնը կատարվեց Ալէքիւրում,
ի ժամանակ անգլիական զւլաւոր հիւպա-
տո հաստատեց, որ «Մալակայի» վրայի
ստեղծարարական քաղաքները անգլիական նաւ-

